



ՀՀ փաստաբանների պալատի կայքի «ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» բաժինը նախատեսված է փաստաբանների (փաստաբանական գրասենյակների), ՀՀ փաստաբանների պալատի, հարցումների (դիմումների) հիման վրա պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների կողմից տարբեր իրավական հարցերի (իրավական նորմերի) վերաբերյալ տրված պաշտոնական պարզաբանումները հրապարակելու և փաստաբաններին հասանելի դարձնելու համար:

**«ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ ՁԵՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԵՂԱԾ ՀԱՐՑՈՒՄԸ և ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է՝**

1. Հարցման (դիմումի) և դրա վերաբերյալ ստացված պարզաբանման փաստաթղթի՝ [քնօրինակից](mailto:info@advocates.am) պատշաճ որակի սկանավորված էլեկտրոնայի ֆայլն ուղարկել [info@advocates.am](mailto:info@advocates.am) էլեկտրոնային փոստի հասցեին:

2. Փաստաթուղթը (և՛ հարցումը, և՛ պարզաբանումը) պետք է սկանավորված լինի հետևյալ չափանիշներով.

- ֆայլի ձևաչափը՝ PDF.
- փաստաթղթի չափը՝ A4.
- սկանավորման տեսակը՝ գունավոր.
- սկանավորման խտությունը (resolution)՝ առնվազն 200 dpi.

3. Նշված բաժնում հարցման և պարզաբանման օրինակները հրապարակվելու են ամբողջությամբ՝ հարցման և պարզաբանման մեջ արտացոլված փաստաբանին, ինչպես նաև գործին վերաբերող անձնական տվյալներով: Փաստաբանին կամ կոնկրետ գործին վերաբերող անձնական տվյալները (օրինակ՝ փաստաբանի հասցեն, հեռախոսահամարը, գործի համարը, վստահորդին անհատականացնող տվյալները (անուն (անվանում), հասցե, հեռախոսահամար և այլն) չհրապարակելու ցանկության դեպքում փաստաբանը պետք է հարցման և պարզաբանման օրինակը ՀՀ փաստաբանների պալատի տրամադրելիս՝ այդ մասին կատարի հատուկ նշում՝ հստակեցնելով այն տվյալները, որոնք նա չի ցանկանում հրապարակել կամ հարցումը և պարզաբանումը տրամադրել հանելով (փակելով) հրապարակման ոչ ենթակա տվյալները:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
աշխատակազմ